2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** 16/1.10

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ [illegible]/3-6/8107-11
08.11.2011թ.

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. նոյեմբերի 7-ի համար 15/15.6/18058-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

044/33379-11
08.11.2011թ.

կատարող՝ Վ. Սարգսյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

16/1.10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

09.11.2011թ. № 3.8-2/87218-11

Ձեր № ____________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.11.2011թ. N15/15.6/18058-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 21-ի N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/33517-11
09.11.2011թ.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ նոյեմբերի 2011 թվականի N Մ- -Ա Մ·16/1.11
քաղ. Երևան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N Մ-495-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի մասին N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերը կարդալ նոր խմբագրությամբ:

2. Սահմանել, որ «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից ձեռք բերված բեռները՝ լուսատուներ, այլումինե ձողեր, սև մետաղից շղթաներ, դրսի համար նախատեսված էլեկտրական ժամացույց, աղբամաններ, նստարաններ (412 տեղ, 10661 կգ ընդհանուր քաշով, 185.913.6 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5691 եվրո, ՄԾՓ S/Մ) ներմուծվում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի մասին N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

*ՀԱՍՏԱՏՎԱԾ Է*
*«Ջերմուկ սոցիալ- տնտեսական զարգացմանն աջակցության» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ*
*---------------- Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ կողմից*
*„ 03 „ նոյեմբեր 2011թ.*

ՀԻՄՆԱԴՐԱՄ 09104402

***« Ջերմուկ սոցիալ- տնտեսական զարգացմանն աջակցության » Հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում»***
***ԾՐԱԳԻՐ***

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նախատեսվում է իրականացնել Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | « Ջերմուկ սոցիալ- տնտեսական զարգացմանն աջակցության » Հիմնադրամ |
| 4. | Ծրագրի կատարողը | « Ջերմուկ սոցիալ- տնտեսական զարգացմանն աջակցության » Հիմնադրամ 3701- Ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8, ՀՎՀՀ- 09104402 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն , Վայոց Ձոր մարզ, քաղաք Ջերմուկ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է *300 000 000 ՀՀ* դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Այս միջոցառումը նախատեսված է ՀՀ Վայոց Ձոր մարզի Ջերմուկ քաղաքի բնակչության , այցելուների և հանգստացողների համար |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի մայիսի 25-ից մինչև դեկտեմբեր 31-ը: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՁՍՏՁԱՀ-ՊԸ-ԱԾՁԲ-01 -Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի Շահումյան փողոցի փողոցային լուսավորվածության հիմնանորոգման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության աշխատանքների գնում- *4 800 000 ՀՀ* դրամ (30.05.2011-24.07.2011թթ.՝ հանրապետության ներսում) |

Մ·16/1.11

| | | |
|---|---|---|
| | | ՋՍՏՋԱՀ-ԱՇՁԲ-01 Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի Շահումյան և Մյասնիկյան փողոցների խաչմերուկից մինչև Ըմպելասրահ տանող փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության աշխատանքների գնում- ***970 000 ՀՀ*** դրամ (25.05.2011-30.08.2011թթ. հանրապետության ներսում)<br>ՋՍՏՋԱՀ-ԱՇՁԲ-02- Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի «Բարեկամություն» կամրջի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության աշխատանքների գնում- ***950 000 ՀՀ*** դրամ (20.07.2011-30.08.2011թթ. հանրապետության ներսում)<br>ՋՍՏՋԱՀ-ԱՇՁԲ-03 - Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի Մելիք Ադամյան , Մյասնիկյան, Բաբկեն Վարդանյան և Գործարանային փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության աշխատանքների գնում ***-980 000 ՀՀ*** դրամ (05.08.2011-30.09.2011թթ. հանրապետության ներսում)<br>ՋՍՏՋԱՀ-ՊԸ-ԾՁԲ-01 Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի Շահումյան փողոցի փողոցային լուսավորվածության հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների գնում – ***2 000 000 ՀՀ*** դրամ (23.06.2011-30.12.2011թթ հանրապետության ներսում.)<br>ՋՍՏՋԱՀ-ՊԸ-ԾՁԲ-02 Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի Շահումյան և Մյասնիկյան փողոցների խաչմերուկից մինչև Ըմպելասրահ տանող փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների գնում – ***330 660 ՀՀ*** դրամ (01.07.2011-30.12.2011թթ. հանրապետության ներսում)<br>ՋՍՏՋԱՀ-ԲԸ-ԱՇՁԲ-01 - Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի Շահումյան փողոցի փողոցային լուսավորվածության հիմնանորոգման աշխատանքների գնում – ***131 203 713 ՀՀ*** դրամ (08.08.2011-30.12.2011թ. հանրապետության ներսում)<br>ՋՍՏՋԱՀ-ՊԸ-ԱՇՁԲ-02 Ջերմուկ համայնքի Շահումյան և Մյասնիկյան փողոցների խաչմերուկից մինչև Ըմպելասրահ տանող փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների գնում – ***16 533 000 ՀՀ*** դրամ (13.06.2011-30.12.2011թ. հանրապետության ներսում) |

| | | |
|---|---|---|
| | | ՋՍՏՋԱՀ-ՊԸ-ԱՇՁԲ-03 Ջերմուկ քաղաքի Ֆ. Ղազարյանի , Երևանյան ճեմուղիների, Դելֆինի լճակից Ըմպելասրահի մոտի կամուրջ ընկած հատվածի արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների գնում ***8 270 000 ՀՀ դրամ*** (31,10.2011-30.12.2011թթ. հանրապետության ներսում)<br>ՋՍՏՋԱՀ-ՊԸ-ԾՁԲ-03 Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի Ֆ. Ղազարյանի , Երևանյան ճեմուղիների, Դելֆինի լճակից Ըմպելասրահի մոտի կամուրջ ընկած հատվածի արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների գնում – ***165 400 ՀՀ դրամ*** (31,10.2011-30.12.2011թթ. հանրապետության ներսում)<br>ՋՍՏՋԱՀ-ՊԸ-ԱՇՁԲ-04 Մյասնիկյան, Բաբկեն Վարդանյան, Գործարանային , Մելիք Ադամյան , Երևանյան Խճուղի փողոցների, Ջերմուկ քաղաքի մուտքի, «Բարեկամություն» կամրջի հատվածների հատվածի արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների գնում-***27 906 673 ,25 ՀՀ դրամ*** (31,10.2011-30.12.2011թթ. հանրապետության ներսում)<br>Վերոնշյալ ծառայությունների մատուցման և աշխատանքների իրականացման համար արտերկրից ներմուծվել են այումինե լուսատուներ, ձողեր, ալյումինե աղբամաններ, քաղաքային ժամացույց՝ ***101 884 237.25 ՀՀ դրամ*** արժողությամբ / ներառյալ բեռնափոխադրման, տրասպորտային առաքման ծախսերն ու մաքսային վճարները/, իսկ հանրապետության ներսում ձեռք է բերվել լամպեր, որոնց արժեքը կազմում է ***4 006 302,75 ՀՀ դրամ***: Նշված ապրանքները օգտագործվել են բոլոր կապալառու կազմակերպությունների կողմից , որոնց հետ կնքվել են շինարարական աշխատանքների իրականացման գնման պայմանագրեր: |
| 10 | Ձեռք բերվող , ներմուծվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները ,նախատեսվող գինը | ՋՍՏՋԱՀ-ԲԸ-ԱՊՁԲ-01 Ջերմուկի ՍՏՁԱՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի փողոցային լուսավորվածության հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար ապրանքների ձեռք բերում, որոնք համարվում են միասնական կոմպլեկտներ: Ալյումինե լուսատուների հետ միաժամանակ ներմուծվել է նաև ալյումինե ձողեր, որոնց վրա ամրանում են ալյումինե լուսատուները , շղթաներ սև մետաղից, որոնք ալյումինե ձողերը միացնում և կազմում են ցանկապատ, ալյումինե աղբամաններ, որոնք ձողերի անբաժան մասն են կազմում, ամրացված են նրանց հետ միասին ,քաղաքային մեծ ալյումինե ժամացույց ՝ էլեկտրական , որը դրված է ալյումինե ձողերի մեջտեղում: |

| | | |
|---|---|---|
| | | 1. այումինե լուսատուներ արտաքին լուսավորվածության համար 141 հատ – *81 482 256 ՀՀ դրամ*<br>2. այումինե ձողեր ցանկապատի համար՝ 40 հատ- *6 093 667 ՀՀ դրամ*<br>3. շղթաներ սև մետաղից ՝90 հատ- *905 623 ՀՀ դրամ*<br>4. ժամացույց դրսի, էլեկտրական մեկ հատ- *4 251 467 ՀՀ դրամ*<br>5. աղբամաններ սև մետաղից, ներկված, դրսի համար՝ 13 հատ – *2 579 891 ՀՀ դրամ*<br>6. նստարաններ սև մետաղից, փայտյա նստատեղով դրսի համար՝ 16 հատ – *3 344 008 ՀՀ դրամ*<br>------------------------------------------------------------<br>Ընդամենը արտերկրից ներմուծվող ապրանքներ ՝ *98 656 911 ՀՀ դրամ* (25.07.2011-30.12.2011թ.)<br>ՁՏՑՁՀ-ԴԸ-ԱՊՁԲ-02 Ջերմուկի ՏՏՁՀ կողմից Ջերմուկ քաղաքային համայնքի փողոցային լուսավորվածության հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար լամպերի ձեռք բերում – *4 006 302. 75 ՀՀ* դրամ (02.09.2011-30.12.2011թթ. հանրապետության ներսում )<br>Արտերկրից ներմուծվող և հանրապետության ներսում ձեռք բերվող ապրանքները օգտագործվել է շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ՝ բոլոր կապալառու կազմակերպությունների կողմից , որոնց ընդհանուր արժեքը կազմում է *194 109 460 ՀՀ դրամ / ներառյալ շինարարական աշխատանքների կազմակերպման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները, հեղինակային հսկողության , փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցումները/:* |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցություն պետական կառավարման , տեղական ինքնակառավարման մարմինների , այլ կազմակերպությունների հետ | Ջերմուկի քաղաքապետարան և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով. |

| | | |
|---|---|---|
| | | Աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Ջերմուկ սոցիալ- տնտեսական զարգացմանն աջակցության » հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին: |

Ար.16/1.11

+

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ար.16/1.11

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

3.11.2011թ № 3/3.8-2/86953

Ձեր №

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 3/3.8-2/85997-11 գրության և հաշվի առնելով Ձեր 28.10.2011թ. N15/15.8/17628-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամ) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի և կից ծրագրի լրամշակված տարբերակը, հայտնում ենք, որ նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված ծրագրի լրամշակված տարբերակի 9-րդ կետի միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների (194,109,460 ՀՀ դրամ) և 10-րդ կետի ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների գները (105,890,540 ՀՀ դրամ) առանձին-առանձին համապատասխանեցնել նույն ծրագրի 6-րդ կետով նախատեսված ծրագրի բյուջեի ընդհանուր արժեքին (300,000,000 ՀՀ դրամ):

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Ակվազյան, հեռ. 595-227

034/32874-11
3.11.2011թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** ա/ր 16/1.11

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

N: ԱԱ/3-6/7806-11
1.11.2011թ

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. հոկտեմբերի 28-ի համար 15/15.8/17623-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագիր որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

- կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և ձեռք բերվող, ներմուծվող ապրանքների և ծառայությունների նախատեսվող գները զգալիորեն գերազանցում են ծրագրի բյուջեով նախատեսվող 300 000 000 դրամը,
- կից ներկայացված ծրագրի 10-րդ կետում ներմուծվող ապրանքների մաքսային վճարների, տուրքերի համար նախատեսված է 91340 ՀՀ դրամ գումար այն դեպքում, երբ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշման՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքները օգտվում են մաքսատուրքի վճարումից ազատվելուց և մաքսավճարի արտոնություններից,
- լրացուցիչ պարզաբանման կարիք ունի «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի շրջանակներում էլեկտրական ժամացույցի, աղբամանների և նստարանների ներմուծման հանգամանքը:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/32516-11
1.11.2011թ

ա/ր 16/1.11

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| - հայտնում ենք, որ նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք ներկայացված ծրագրի լրամշակված տարբերակի 9-րդ կետի միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների (194,109,460 ՀՀ դրամ) և 10-րդ կետի ձեռքբերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների գները (105,890,540 ՀՀ դրամ) առանձին-առանձին համապատասխանեցնել նույն ծրագրի 6-րդ կետով նախատեսված ծրագրի բյուջեի ընդհանուր արժեքին (300,000,000 ՀՀ դրամ): | Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագիրը լրամշակվել է |
| **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| - կից ներկայացված ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և ձեռք բերվող, ներմուծվող ապրանքների և ծառայությունների նախատեսվող գները զգալիորեն գերազանցում են ծրագրի բյուջեով նախատեսվող 300 000 000 դրամը,<br>- կից ներկայացված ծրագրի 10-րդ կետում ներմուծվող ապրանքների մաքսային վճարների, տուրքերի համար նախատեսված է 91340 ՀՀ դրամ գումար այն դեպքում, երբ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշման՝ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքները օգտվում են մաքսատուրքի վճարումից ազատվելուց և մաքսավճարի արտոնություններից, | Դիտողությունը հաշվի է առնվել, ծրագրում կատարվել է համապատասխան հստակեցում, 10-րդ կետի հետ կապված դիտողությունը ուղղվել է և ծրագրում ամրագրվել է թվարկված ապրանքների ներմուծման հանգամանքը: |
| - լրացուցիչ պարզաբանման կարիք ունի «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագրի շրջանակներում էլեկտրական ժամացույցի, աղբամանների և նստարանների ներմուծման հանգամանքը | |

Ար 16/1.12

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ար 16/1.12

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ նոյեմբերի 2011 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

## ԱՄՆ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի սեպտեմբերի -ի N ՀՔ/22/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդել, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 482837.60 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (72 տեղ, 2165 կգ ընդհանուր քաշով, 475062.60 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7275 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Լոռու ու Շիրակի մարզպետներին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխասյանի կողմից

«2» նոյեմբերի 2011

Մարդասիրական օգնություն Հայաստանին

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդել, Կալիֆորնիա 91202) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, սոցիալական, կրթության, առողջապահության ոլորտներ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 482,837.6 ԱՄՆ դոլար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 15-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետներ, | Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 29 սեպտեմբերի 2011 մինչև 15 դեկտեմբերի 2011 |

Ար 16/1.12

| | | |
|---|---|---|
| | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 482,837.6 ԱՄՆ դոլար |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>2165 կիլոգրամ բեռ<br>475,062.60 ԱՄՆ դոլար<br>Տեղափոխում՝ 7,275.00 ԱՄՆ դոլար |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Աբովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 500.00 ԱՄՆ դոլար, |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ԱՄՀ ԾՈՎԱՅԻՆ ԲԵՌ 204

# ՇՆՈՐՀՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

2

Ստացող՝
Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Ալեք Մանուկյան 9, 2-րդ հարկ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ.՝ 10-51-20-50
Ֆաքս.՝ 91-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխասյան

01574053

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների խառկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| AAMSC/Չերիկ դոկտոր Ա. | Դեղեր | Դոկտոր Աղաբաբյան Ն. - Սակուրա բարեգործական միություն | հասարակական բարեգործական կազմակերպություն: Գտնվելու վայրը՝ <<ԱՐԱԲԿԻՐ>> ԲՀ- ԵԴԱԻ, հասցեն՝ քաղաք Երևան, Մամիկոնյանց փ. 30, հեռ. (+37410) 230-560, Իրավաբանական հասցեն՝ քաղաք Երևան, Գրիբոյեդովի 5/a , բն. 28, | Բեռները՝ հակացնցումային դեղորայքի տեսքով, նախատեսված են <<ԱՐԱԲԿԻՐ>> ԲՀ- ԵԴԱԻ էպիլեպտոլոգիական կենտրոնում գրանցված էպիլեպսիայով հիվանդ երեխաների համար: Դեղորայքը <<Սակուրա>> ԲՀԿ-ն հանձնում է <<ԱՐԱԲԿԻՐ>> ԲՀ-ին նվիրատվությամբ որը և կատարում է դեղորայքի անվճար բաշխումը հիվանդներին | Իրական շահառուն հանդիսանում են էպիլեպսիայով հիվանդ երեխաները, որոնք գտնվում են դիսպանսեր հաշվառման և հսկողության տակ <<ԱՐԱԲԿԻՐ>> ԲՀ էպիլեպտոլոգիական կենտրոնում: | SC 204-19 | 1 | | 90 | 41 | 2,944.00 |
| | | | | | | | | | | | |
| AECP/Նաջարյան, դոկտոր Լարի | Բժշկական պարագաներ | Եղիազարյան Նունե - AECP | Հայկական ակնաբուժության նախագիծ " ԲՀ /ՀԱՆ/ Գտնվելու վայրը՝ Երևան, Այգեստան 5 րդ փ., տ. 7 Իրավաբանական հասցեն՝ Երևան, Վրացական 9, բն. 44, ՀՎՀՀ՝ 00074765 | Բեռը ուղարկված է "Հայկական ակնաբուժության նախագիծ " ԲՀ- ի Armenian EyeCare Project հիմնադիր կազմակերպությունից կամ նրա անունից լույս հայի աչքերին ծրագրի իրականացման համար (ՀՀ ԿԲԾՀՀ որոշում Մ-197Ա, 09/04/2010)՝ | Բեռը հիմնականում օգտագործվելու է ՀԱՆի Աչքի շարժական հիվանդանոցում դիագնոստիկայի և բուժման համար, ՀԱՆի-անհասության ռետինոպաթիայի սքրինիգային և բուժման ծրագրի շրջանակներում, դեղորայքի և սարքավորումների մի մասը տրամադրվելու է Ս.Վ. Մալայանի անվ. Ակնաբուժական կենտրոնին և Քանաքեռ-Զեյթուն ԲԿ –ին օգտագործման համար: | SC 204-17 | 4 | | 19 | 9 | 13,453.00 |
| AECP/Նաջարյան, դոկտոր Լարի | Դեղեր | Եղիազարյան Նունե - AECP | | | | SC 204-18 | 7 | | 19 | 9 | 13,390.00 |
| Հայ ակնաբուժական ծրագիր | Բժշկական պարագաներ | Եղիազարյան Նունե - AECP | | | | SC 204-07 | | 3 | 816 | 370 | 277,250.00 |
| Հայ ակնաբուժական ծրագիր | Դեղեր | Եղիազարյան Նունե - AECP | | | | SC 204-08 | | 1 | 70 | 32 | 106,280.00 |
| | | | | | | | | | | | |
| Հայաստանի Ամերիկյան համալսարան | Սավան, սրբիչ և օճառ | Օրդյան Անահիտ - ՀԱՀ | Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող.40, ՀՎՀՀ 01511187, | Նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման նպատակով | | SC 204-09 | | 1 | 208 | 94 | 3,507.00 |
| Հայաստանի Ամերիկյան համալսարան | Ուսումնական ամսագրեր | Օրդյան Անահիտ - ՀԱՀ | | | Նվիրատվություն ուսանողության և հանրության օգտագործման համար | SC 204-16 | 1 | | 50 | 23 | 3,159.98 |
| | | | | | | | | | | | |

## ՄՀՀ ԾՈՎԱՅԻՆ ԲԵՌ 204

## ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հայ ամերիկյան մշակութային ասոցիացիա | Համակարգիչ մոնիտոր | Հակոբյան Հ.Հայ-ամերիկյան առողջության կենտրոն | Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամ, ք. Երևան, Մխիթար Հերացու 5, ՀՎՀՀ 01541443 | Բեռի պարունակությունը նախատեսված է Կենտրոնի ընդունարանի ադմինիստրատիվ աշխատակիցների և բժիշկների համար՝ այցելուների գրանցման և ինֆորմացիայի պահպանման նպատակով: | Բեռի ստացման իրական շահառուն Հայ Ամերիկյան Առողջության Կենտրոն Հիմնադրամն: Կենտրոնի նպատակն է Հայաստանում և տարածաշրջանում պահպանել, բարելավել մարդկանց առողջությունը, զբաղվել կանխարգելիչ բժշկությամբ, իրականացնել կրծքագեղձի, արգանդի պարանոցի քաղցկեղի կանխարգելման, ոսկորների խտության ախտորոշմամբ կոտրվածքների կանխարգելման ծրագրեր, ինչպես նաև՝ նպաստել ընտանիքի առողջության պահպանմանը, առողջ ապրելակերպի քարոզչությանը, իրականացնել կրթական ծրագրեր: | SC 204-05 | 3 | | 186 | 84 | 4,784.00 |
| Ամերիկայի հայ ավետարանչական ասոցիացիա | Գրքեր, ֆուտբոլի գնդակ և հագուստ | Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն | ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ, Բաղրամյան 18, իրավաբանական հասցե՝ | Բարեգործական բաշխման նպատակով՝ կարիքավոր ընտանիքներին | Ընկերակցության հովանու ներքո գտնվող կարիքավոր ընտանիքներ՝ անձնական օգտագործման նպատակով, սպորտային ծրագրերին, կրթական ծրագրերին | SC 204-04 | | 3 | 1,902 | 863 | 12,630.00 |
| Նյու Յորքում Հայ եկեղեցական թեմ | Համակարգիչ մոնիտոր և պրինտեր | Քջոյան Նավասարդ - Երևանի թեմ | Առաքելական Սուրբ եկեղեցի Արարատյան Հայրապետական Թեմ Հասցե - ք. Երևան, Իսրայելյան 21 ՀՎՀՀ – 02539777 Հեռ. 58-73-68 | Արարատյան Հայրապետական Թեմի ՀԵԵՄ Կրթադաստիարակչական կենտրոնում բարեգործական հիմունքներով օտար լեզուներ և համակարգչի դասընթացների նպատակով | Հայ եկեղեցու երիտասարդական միության անդամները, ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաները | SC 204-10 | 24 | | 540 | 245 | 6,650.20 |
| Հայ օգնության ֆոնդ | Մարտկոցներ | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | ԱՄՆ Արևելյան թեմի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ 02517115 | Բեռը նախատեսված է ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ գրասենյակի համակարգչային ցանցի վերազինման համար | SC 204-01 | 1 | | 38 | 17 | 749.00 |
| Հայ օգնության ֆոնդ | Համակարգիչ մոնիտոր և պրինտեր | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | | | | SC 204-02 | 5 | | 118 | 54 | 1,200.00 |
| Հայ օգնության ֆոնդ | Ֆոտոապարատի լինզաներ | Բագրատ Սարգսյան, ՀՕՖ | | | | SC 204-03 | 2 | | 12 | 5 | 2,040.2 |



## ՄՀՀ ԾՈՎԱՅԻՆ ԲԵՌ 204

## ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հովարդ Կարաքեշյան անվան կորպորացիա | Բժշկական ամսագիր | Բժիշկ տեր Պետրոսյան Կամո - HKCC | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն, գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝ ք. Երևան 0047, Նորքի Այգիներ 180, ՀՎՀՀ-01533153: | Բժշկական մասնագիտական ժուռնալները նախատեսված են «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ «Նորք» կենտրոնի և «Նորք Մարաշ» բժշկական կենտրոնի գրադարանների համար, այնտեղ աշխատող բժիշկների որակավորման բարձրացման նպատակով՝ անվճար ընթերցանության և պատճենահանման տրամադրումով: | Բժշկական մասնագիտական ժուռնալները նախատեսված են «Հովարդ Կարա•յոզյան» ԲԲՀԿ «Նորք» կենտրոնի և «Նորք Մարաշ» բժշկական կենտրոնի գրադարանների համար, այնտեղ աշխատող բժիշկների որակավորման բարձրացման նպատակով՝ անվճար ընթերցանության և պատճենահանման տրամադրումով: | SC 204-11 | 1 | | 16 | 7 | 50.00 |
| Հովարդ Կարաքեշյան անվան կորպորացիա | Ռենտգենյան սարքի պահեստամասու | Բժիշկ տեր Պետրոսյան Կամո - HKCC | | Բարեգործական նպատակ (ՀՀ ԿԲԾՀՀ 18.02.2011թ. N Ս-097-Ս որոշում «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ կողմից 2011թ. ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին): | Ստանալիք ապրանքներից ռենտգեն սարքավորման պահեստամասերը նախատեսված են «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ Վանաձորի մասնաճյուղ դարմանատան համար, ուր հաշվառված են մինչև 14 տարեկան 16 248 երեխաներ, որոնք ստանում են անվճար ատամնաբուժական հետազոտություն և բուժում: | SC 204-14 | 1 | | 2 | 1 | 87.45 |
| Մալայան, դոկտոր Սամուել (Կալիֆորնիա) | Բժշկական պարագաներ | Դոկտոր Աղաջանովա Յ. Մանկական Էնդոկրինոլոգիայի Կլինիկա | բժշկական համալսարան /ԵՊԲՀ/ <<Մուրացան>> հիվանդանոցային համալիր Իրավաբանական հասցե՝ Կորյունի 2, Երևան 025, Գտնվելու վայր- Մուրացան | Բեռները նախատեսված են էնդոկրին հիվանդություններով տառապող ստացիոնար կարգով բուժվող և դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաների բուժման համար | Բեռի ստացման հիմնական շահառուն <<Մուրացան>> հիվանդանոցային համալիրի կլինիկաներն են: Դրանք նախատեսված են երեխաներին անվճար բուժօգնություն տրամադրելու համար: | SC 204-06 | 8 | | 344 | 156 | 14,876.00 |
| Օրթոմանկաբուժություն | Բժշկական սարքեր | Կոլոյան Կարեն - Երեխաների վերածնունդ | Երեխաների Վերածնունդ, Վ.Վաղարշյան 24/3, բն 3, ՀՎՀՀ 00069638 | Բժշկական սարքավորումներ և նյութեր, որոնք օգտագործվում են հիմնականում Արաբկիր բժշկական կենտրոնում | Արաբկիր բժշկական կենտրոն երեխաների անվճար բուժման նպատակով | SC 204-12 | 1 | | 90 | 41 | 4,000.00 |
| Սուսման, դոկտոր Միշել | Բժշկական սարքեր և պարագաներ | Կոլոյան Կարեն - Երեխաների վերածնունդ | | | | SC 204-13 | 4 | | 70 | 32 | 3,000.00 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ԺՐ-16/1.12

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

09.11.2011թ. № 3.8-2/87161-11

Ձեր № ____________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 03.11.2011թ.-ի N 15/15.6/17895-11 գրությամբ ներկայացված «ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագրի մասին ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

որոշման նախագծին կից ներկայացված Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության 2011թ.-ի նոյեմբերի 2-ի N ՄՀՀ 07/2011 գրությամբ տեղեկացվում է, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ուղարկված բեռը Երևանում կլինի սույն թվականի սեպտեմբերի վերջին (առկա է ժամկետների անհամապատասխանություն): Միաժամանակ կարծում ենք, որ ծրագրի իրականացման ժամկետների անհամապատասխանություն կա նաև նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում, որտեղ ծրագրի իրականացման ժամկետը ամրագրված է 29.09.2011թ.-ից մինչև 15.12.2011թ.-ը այն դեպքում, երբ այն Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության կողմից հաստատվել է 2011թ.-ի նոյեմբերի 2-ին:

Ուստի, ուսումնասիրելով գրությամբ ներկայացված փաստաթղթերի ցանկը՝ ենթադրվում է, որ ներկրվող բեռը դեռևս չի հատել Հայաստանի Հանրապետության սահմանը և հետևաբար, ծրագրի իրականացման ժամկետը չի կարող ավելի շուտ լինել, քան 2011թ.-ի նոյեմբեր ամիսը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերանայել ծրագրի իրականացման ժամկետները:

ԺՐ-16/1.12

ՄՀՀ ՕԴԱՅԻՆ ԲԵՌ 204

ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՆՈՐ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՍՏԱՑՈՂ | Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը: | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս | ԿՈԴ | ԱՐԿՂ | ՊԱԼԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ $ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Պառկինս կույրերի դպրոց | Ուսումնական նյութեր և պարագաներ | Ավագյան Ռուզաննա - Գյումրիի երեխաների տուն | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու "Երեխաների տուն" ՊՈԱԿ, ՀՀ 3103, ք. Գյումրի Թամանյան17, ՀՎՀՀ-055219182 | Նախատեսված է բազմակի արատներով տեսողական խնդիրներով խուլ երեխաների հետբազմակողմանի աշխատանքներ կատարելու համար | Գյումրու "Երեխաների տունը" նախատեսված է 1օրեկանից 6 տարեկան ՀՀ տարբեր մարզերից ընդունված բազմակի արատներով երեխաների համար: "Երեխաներ տան" երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման համար: | SC 204-15 | | 1 | 184 | 83 | 5,011.76 |
| | | Ընդհանուր | | | | | 63 | 9 | 4,774 | 2,165 | 475,062.60 |

Ար. 16/1.12

Միաժամանակ, հաշվի առնելով ծրագրի իրականացման ոլորտները և շահառուների գտնվելու տարածաշրջանները կարծում ենք, որ անհրաժեշտ  է որոշման նախագծի 4-րդ կետում ներառել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, Երևանի քաղաքապետարանին, Լոռու և Շիրակի մարզպետարաններին:

Հարգանքով՝

/Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս.Այվազյան, հեռ. 595-227

034/33444 - 11
09. 11. 2011թ.

Ար. 16/1.12


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am


10.11.2011թ. N ՀՔ/22/10360-11

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 03.11.2011թ. թիվ 15/15.6/17895-11 գրության կապակցությամբ՝ «ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող՝Ն.Փափախչյան
հեռախոս 52 27 21

020/33591- 11
10.11.2011թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
## ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
## ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Առ. 16/1.12

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ ԱՄ/3-6/8018-11
07.11.2011թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. նոյեմբերի 3-ի համար 15/15.6/17895-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

044/33224-11
07.11.2011թ.

*կատարող՝ Ա. Քալանթար*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

Առ. 16/1.12

# ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարություն դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| որոշման նախագծին կից ներկայացված Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության 2011թ.-ի նոյեմբերի 2-ի N ՄՀՀ 07/2011 գրությամբ տեղեկացվում է, որ Միացյալ հայկական հիմնադրամի կողմից ուղարկված բեռը Երևանում կլինի սույն թվականի սեպտեմբերի վերջին (առկա է ժամկետների անհամապատասխանություն): Միաժամանակ կարծում ենք, որ ծրագրի իրականացման ժամկետների անհամապատասխանություն կա նաև նախագծին կից ներկայացված ծրագրի 9-րդ կետում, որտեղ ծրագրի իրականացման ժամկետը ամրագրված է 29.09.2011թ.-ից մինչև 15.12.2011թ.-ը այն դեպքում, երբ այն Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության կողմից հաստատվել է 2011թ.-ի նոյեմբերի 2-ին:<br>Ուստի, ուսումնասիրելով գրությամբ ներկայացված փաստաթղթերի ցանկը՝ ենթադրվում է, որ ներկրվող բեռը դեռևս չի հատել Հայաստանի Հանրապետության սահմանը և հետևաբար, ծրագրի իրականացման ժամկետը չի կարող ավելի շուտ լինել, քան 2011թ.-ի նոյեմբեր ամիսը:<br>Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք վերանայել ծրագրի իրականացման ժամկետները: | Հաշվի կառնվի՝ կազմակերպությունը տեղեկացված է և կներկայացնի լրամշակված ծրագիր: |
| Միաժամանակ, հաշվի առնելով ծրագրի իրականացման ոլորտները և շահառուների գտնվելու տարածաշրջանները կարծում ենք, որ անհրաժեշտ է որոշման նախագծի 4-րդ կետում ներառել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությանը, Երևանի քաղաքապետարանին, Լոռու և Շիրակի մարզպետարաններին: | Հաշվի է առնվել: |

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ԿՐ.16/1.13

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**___ նոյեմբերի 2011 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-1/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության հասցեով ուղարկված հատուկ սարքավորումների (11 տեղ, 60.2 կգ ընդհանուր քաշով, 46300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը՝ բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

ԿՐ.16/1.13

Հայաստանի Հանրապետություն,Երևան 0010, Նալբանդյան 28
Հեռ. (374 10) 59 00 01, Ֆաքս (374 10) 56 05 28
Էլ.Փոստ Minister@mtc.am

N 02/09.3/9446-11
"10" 11 2011թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն.Ս.Տեր-Սիմոնյանին**

***Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան***

Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության հասցեով Ամերիկայի Միացյալ Նահանգներից <<Հեռահողորդակցության Միջազգային Միության>> կողմից մատակարարվել է 11 տեղ, 60.2 կգ. ընդհանուր քաշով, 46300 ԱՄՆ դոլլար արժեքով հատուկ սարքավորումներ: Խնդրում եմ Ձեզ վերը նշված բեռները դիտարկել որպես բարեգործական՝ մաքսատուրքից և ԱԱՀ-ի վճարումից ազատելու համար: Հայցում եմ հնարավորինս սեղմ ժամկետներում խնդրին անդրադառնալու Ձեր պատրաստակամությունը:

Առդիր՝ 1 թերթ:

**Հարգանքներով՝**

**Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

036/33659-11
11.11.2011թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ նոյեմբերի 2011 թվականի N Մ- -Ա** մր. 16/1.14

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-2/-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի նոյեմբերի -ի N ՀՔ/22/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (20 տեղ, 4829 կգ ընդհանուր քաշով, 275935.51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

մր. 16/1.14

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.11.2011թ. № 3.8-2/87259-11

Ձեր № __________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.11.2011թ. N15/15.6/18082-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N2) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/33607-11
10.11.2011թ.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Մ.16/1.14

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 56 27 83
էլ. փոստ minister@moh.am

10.11.2011թ. N ՆՔ/22/10386-11

Ձեր N ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր07.11.2011թ. թիվ 15/15.6/18082-11 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 2)**» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Հ. ՔՈՒՇԿՅԱՆ

Դեղորայքային քաղաքականության բաժին
Կատարող Ն.Փափախյան
հեռախոս 52 27 21

020/33618-11
10.11.2011թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ.16/1.14

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ ՄԱ/3-6/8108-11
08.11.2011թ.

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. նոյեմբերի 7-ի համար 15/15.6/18082-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին **(N 2)** որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

կատարող՝ Լ. Հակոբյան
միջազգային հարաբերությունների բաժին
հեռ. 59 43 49

044/33378-11
08.11.2011թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

___ նոյեմբերի 2011 թվականի N Մ - -Ա дг-16/1.15

քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի -ի N 3/3.8-2/-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի -ի N ԱԱ/3-6/-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) ձեռք բերված ամրանները (119 տեղ, 531300 կգ ընդհանուր քաշով, 185500000 դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

дг.16/1.15

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 10) 59 52 26

10.11.2011թ. №3.8-2/87266-11

Ձեր № ______________________

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ՝
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 07.11.2011թ. N15/15.6/18063-11 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն) ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ հաշվի առնելով ծրագրի իրականացման բնագավառը և վայրը անհրաժեշտ է որոշման նախագծի 2-րդ կետում ներառել նաև ՀՀ քաղաքաշինության նախարարությանը և Երևանի քաղաքապետարանին:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

034/33665-11
11.11.2011թ.

Կատարող՝ Ս. Այվազյան, հեռ. 595-227

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ**
**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ** Հր-16/1.15

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

№ ՄԱԿ/3-6/8086-11
08.11.2011թ.

**ՀՀ կառավարության բարեգործական**
**ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր ս/թ. նոյեմբերի 7-ի համար 15/15.6/18063-11 գրությամբ կարծիքի ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ**

044/33360-11
08.11.2011թ.

*կատարող՝ Լ. Հակոբյան*
*միջազգային հարաբերությունների բաժին*
*հեռ. 59 43 49*

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ նոյեմբերի 2011 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

Հր-16/1.16

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

